

ՃՇՄԱՐԻՏ, ՃՇՄԱՐԻՏ ԱՍՈՒՄ ԵՄ ՔԵԶ...

Այսօր, մարմինս ոչ ստուեր ունի, ոչ հոգի—
 Ոչ շղթայ ծանր, եւ ոչ էլ քեւ լուսեղէն, —
 Կէս սովամահ մի գայլի պէս՝
 Դունչը մեկնած աներեւոյթ լուսնեակին ...
 Ոռնում է ցան իր ապրելու,
 Տենչանքն անգուսպ պատառելու, լափելու
 Տափուկ արիւնն եղնիկին՝ դեռ կենդանի ...:
 Բայց պատասխանն իր ոռնոցին
 Ոռնոց է զի՛լ, արձագանգ.
 Եւ յուսահատ, հերոսական վայրի կամֆով՝
 Թաքն է փշրում ժանիֆներով իր սրածայր,
 Լափում արիւնն իր սրտի ...:
 Այսօր մարմինս ոչ ստուեր ունի, ոչ հոգի ...:

ՄԱՀՈՒԱՆ ՄԵՂԵԴԻՆ

Աղաբէզ ԹաշՏեանին

Արթնանում է գիշերն ահա,
 Յօրանջելով մութ վիհի պէս,
 (Մի գով զեփիւռ փրչեց անցաւ՝
 Թիթեռնիկի ըստուերի պէս...)

* *

Վերն ամպերի մուգ ֆարավան,
 Շարուէ — շարա՛ն, շարուէ՛ շարան,
 Քայլում է դէպ՝ ո՞ր հանգրըւան —
 Այսպէս լըռին շարուէ շարան ...:

* *

Տիեզերքի քալածոտ գրկում,
 Լուսինը մերք, Աստծոյ հոգին,
 Ո՞ւմ նամբան է լուսաւորում՝
 Պատռելով կուրծքը փառսին ...:

**

Անցէ՛ք միտքեր, անցէ՛ք խոհեր,
Ամպերի հետ շարուէ՝ շարա՛ն.
Հոգիս՝ փռու, միտքս՝ զիշեր,
Գեհե՞նն է այս քէ փաւարան ...:

Ե Ր Գ Ը

Երկար օրեր լուռ մընացի,
Որ կարենամ այսօր խօսել —
Քանզի խօսքը նըման հացի,
Զրկուած սրտով պիտ' ընդունել ...:

*

Ահա երգըս, սրբտէս բըխած —
Որպէս ջուրը իր մութ ակից,
Ըսպասում է որ մի յոգնած
Սիրտ գովացնէ օրուայ տապից ...:

*

Բայց դիմացըդ գինու բաժակն,
Լի խաղողի ազնիւ հիւթով,
Ներշնչումի զսպումած լընակ,
Ալեկոծում է գայրոյթով ...:

*

Գիտեմ այս վարդ բաժակի մէջ,
Մի օր գինին կ'առնէ լեզու,
Որպէս մի հին մատեանի էջ —
Կեանքի հէքեաքը պատմելու ...:

Այն է երգը որ կ'արբեցնէ,
Երգը ա՛յն է որ սէր կը տայ,
Մինչ հոգուդ մէջ փակի՛ երգեր
Կեանքիս քախիծ ու մուգ կը տան ...:

*

Ահա երգըս՝ սիրոյ նըման,
Մերք խանդավառ ու միշտ տըխուր,
Որպէս կեանքի անյայտ նամբան
Տանում է ինձ — ո՛վ գիտէ ո՞ւր . . .:

Յ. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ